# Լեւոն Ահարոնեան

Տխուր ենք յայտնելու որ օգոստոսի 27-ին մահացել է ազգային-հասարակական գործիչ, բարերար, գործարար **Պրն. Լեւոն Ահարոնեանը**:

Լեւոն Ահարոնյանը ծնւել էր 1930 թւականին, Իրանի հայկական պատմական Սալմաստ գավառի Հաֆթվան գիւղում:

1980-ական թւականներին երկար տարիներ եղել է Թեհրանի Հայոց Թեմական խորհրդի անդամ եւ ատենապէտ:

Հայաստանի վերանկախացումից յետոյ նա առանցքային դերակատարութիւն է ունեցել Իրան-Հայաստան առեւտրատնտեսական յարաբերութիւնների ձեւաւորման եւ զարգացման գործում: Գործչի անմիջական ջանքերով է կառուցւել Իրանը Հայաստանին կապող ժամանակաւոր կամուրջը: 1993 թւականին նա իր գործընկերների հետ հիմնադրել է Իրան-Հայաստան առեւտրի պալատը, որը ղեկավարել է երկար տարիներ:

Բարերարի միջոցներով է կառուցւել Թեհրանի Զեյթուն թաղամասի հայոց ազգային «Ա. Ա. Ահարոնեան» մանկապարտեզը: Լեւոն Ահարոնեանը եղել է նաեւ «Յոյս» հասարակական-մշակութային հանդէսի հիմնադիրը:

Նա բարերարութեամբ է զբաղւել նաեւ Հայաստանում: նրա ներդրմամբ վերանորոգւել են դպրոցներ, հիմնանորոգւել է Հայաստանի Բնութեան թանգարանը:

2003 թւին պրն. Ահարոնեանը ստեղծել է **Հայ Դպրոց Հիմնադրամը**՝ նպատակ ունենալով ապահովել Հայաստանի գիւղային եւ սահմանամերձ դպրոցները արդիական միջոցներով: Հայ Դպրոց Հիմնադրամի ղէկավար մարմինները, թէ՛ Հայաստանում եւ թէ՛ ԱՄՆ-ում ջանք չեն խնայել այս գործում՝ աջակցելով 385 դպրոցի, 30,600 աշակերտի, եւ պիտի անհապաղ շարունակեն իրագործելու այս սուրբ նպատակը:

**Հայ Դպրոց Հիմնադրամի Հայաստանեան եւ ԱՄՆ-ի** վարչական կազմերը իրենց խորազգաց ցաւակցութիւնն են յայտնում Վահէ Ահարոնեանին եւ համայն ընտանիքին: Ըստ Թումանեանի՝

Մահը մերն է
Մենք մահինը
Մարդու գործն է միշտ անմահ